ԿԱՐԵՒՈՐ ԼՈՒՐԵՐ

Баку լրագիրը իւր 31 համարում Հայոց Պոմպէա (Армянская Помпея) վերնագրով մի փոքր յօդուածով յայտնում է, որ Մոսկվայում, Յունվարի 28-ին, Հնագիտական ընկերութեան մէջ գումարուել է արևելեան բաժնի ժողովը պրոֆէսսոր Ն. Ի. Վեսելովսկու նախագահութեամբ, որ նուիրուած է եղել պրոֆես. Ն. Մառի Անիում կատարած պեղումների փառաւոր հետևանքին հայկական քանդակագործութեան վերաբերմամբ։ 1909-ի ամառը Անիում կատարուող պեղումների ութերորդ տարին էր։

Հայոց Պոմպէի այս տարիներում բացուած տեսարանը իւր 80 աշտարակներով, քաղաքի պարիսպներով, 11 մեծ և 3 փոքր դռներով, փողոցներով, տաճարներով, որոնք իրանց դերբուկների մէջ պահպանում են Ե.–Ի. դարերի որոշ շրջանի ճարտարապետութեան յիշատակները այնքան գրաւել է ընկերութեան և գիտնական հաստատութիւնների ուշադրութիւնը, որ պեղումներ ղեկավարող Ն. Մառի տրամադրութեան տակ 1909 թուին դրուեց մինչ 7000 ր.։ Անցեալ տարուայ գործառնութիւնը մանաւանդ շատ յաջող էր։ Բացուել է Ս. Առաքելոց եկեղեցու հրապարակը, որ շրջապատուած է եղել աներով. բացուել է գլխաւոր փողոցը որ անցնում էր հին քաղաքի միջով, երկու կողմից ունենալով շինութիւններ և ջրմուղ։ Փողոցը սալայատակ է եղել, մի քանի տների դռների առաջ դեռ կան քարէ նստարանները. Ս Առաքելոց տաճարն ու շրջապատող դամբարանները ընձեռել են հարուստ և բազմազան գիւտերի հաւաքածուներ, ինչպէս հին արձանագրութիւններ, առարկաների հին և նրբաճաշակ քանդակներ ու ճարտարապետութեան այլ նմոյշներ, նկարներ, անդրիներ. որոնք անկասկած, մեր գիտնականներին կըտան անսպառ նիւթ մի քանի տարիներ հնագիտական հետազօտութիւններ անելու համար։

Բարիզի արևելեան կենդանի լեզուաց վարժարանի մէջ Հայերէնի ուսուցիչ Մ. Ֆրեատերիք Մաքլէռի առաջարկութեամբ ֆրանսական կառավարութիւնն յանձն առած է իր ծախքով տպագրել նախկին պատրիարք Օրմանեան Տ. Մաղաքիա արք.ի ֆրանսերէն լեզուով յօրինած Հայաստանեաց Եկեղեցւոյ պատմութիւնը։ Օրմանեան տարբերութիւնէ ի վեր կաշխատէր այս գործին՝ հայերէն աւելի ընդարձակ երկ մը արդէն գրած ըլլալով նոյն նիւթին վրայ, Արմաշի դպրեվանքին մէջ իր դասախօսութեանց ընթացքին։ Ֆրանսացի գրագէտ մը խնամք տարած է գրութեան ֆրանսերէնին։ Ֆրանս. կառավարութիւնը նաև Մ. Մաքլէռէ դներ է 450 նկարներ, հնութեանց լուսանկարներ, նէն Ս. Էջմիածնէն բերուած։—Մ. Մաքլէռ յաջորդն է Մ. Մէյէի, որ Սորպոնի համալսարանին մէջ դասախօսութեան կոչուած ըլլալով, հրաժարեր է հայերէնի պաշտօնէն Արևելեան Լեզուաց վարժարանին մէջ, ուր Մ. Մէյէ ինքն ալ Մ. Քարիէռի յաջորդած էր։ (Բիւզանդիոն)

ՈՒՂՂԵԼԻՔ

«Ս. Հայրապետի անդրանիկ կոնդակի զարդանկարչութիւնը» վերնագրով յօդուածում էր. 159, տող 4—6 որ դարձեալ մեր աւանդութիւնների համաձայն Տէրն ուղարկել է Աբգար թագաւորին «Թադէոս առաքեալի ձեռքով» նախադասութեան մէջ ընդգրուած բառերն աւելորդ են և անուշադրութեամբ չեն որբագրուած։

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՊԱՏՄ. ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ԳՐԱԴԱՐԱՆ
БИБЛИОТЕКА Института Истории Культуры СССР